**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 19.06.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲՔԱ-LO-2020/71

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Բողոք բերող՝ «Ալ-Մասքա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնանշման հարցում, ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգման և մասնակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 01.06.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և ստորպի նախարարության կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգման և մասնակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. 11.05.2020թ. ժամը 11:00 կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու մասին կայացված որոշումը,

2. «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.06.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/71 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

09.06.2020թ.-ին և 19.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.06.2020թ.-ին:

**2. «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ալ-Մասքա» ՍՊԸ-ն 01.06.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգման և մասնակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև Ընթացակարգ/:*

*Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Ալ-Մասքա» ՍՊԸ-ն:*

*Ըստ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2020թ. ժամը 11:00 կայացած նիստի թիվ 4 արձանագրության.*

*- «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32 կետի 1 ենթակետի /ե/ պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացվել հայտի ապահովման բնօրինակը՝ բանկային երաշխիքի ձևով:*

*- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42 կետը, որոշել է «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար ե մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:*

*- հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1 մասի 1 կետը գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, քանի որ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:*

*Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետը և 41-րդ կետը, գտնում ենք որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել վերոնշյալ կետերի խախտումներ ներքոնշյալ իրավական և փաստական հիմքերով:*

*Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.*

*Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը*

*հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրանային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*

*Նույն կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:*

*Այս դեպքում գտնում ենք, որ նույնիսկ եթե «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից հայտերի բացման հաջորդ օրը չէր ներկայացվել բանկային երաշխիքի բնօրինակը, ապա այս դեպքում կազմակերպությանը պետք է տրվեր այն շտկելու հնարավորություն, հատկապես, որ Կարգում հակառակը չի ասվում, հետևաբար, եթե արգելված չէ, ուրեմն կարելի է:*

*Ցանկանում ենք նշել ևս մեկ հանգամանք.*

*«Ալ-Մասքա» ՍՊԸ-ն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի քաղաքում: Քանի որ մրցույթը հայտարարված է եղել 29.04.2020 թվականին, իսկ հայտերի բացման նիստը նախատեսվել է իրականացնել 11.05.2020 թվականին, այսինքն 2020 թվականի մարտի 16-ից ՀՀ կառավարության կողմից արտակարգ դրություն հայտարարելու մասին կառավարության որոշման ժամանակահատվածում, իսկ մենք վստահ ենք եղել, որ մեկ օրվա ժամկետում կհասցնեինք ներկայացնել երաշխիքի բնօրինակը ՀՀ ԿԳՄՄՆ-ին, սակայն քանի որ ՀՀ-ում շարունակվել է արտակարգ դրությունը, իսկ նման պայմաններում տնօրենը կամ այլ ցանկացած աշխատակից ի վիճակի չեն եղել, հնարավորություն չեն ունեցել Մարտունի քաղաքից գալու Երևան քաղաք, որպեսզի գնահատող հանձնաժողովին հանձնեն բանկային երաշխիքի բնօրինակը, արդեն նշված պարզ պատճառով, այն է՝ ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության և դրանից բխող ազատ տեղաշարժման իրավունքը, հատկապես մարզերի միջև, սահմանափակված լինելու պատճառով:*

*ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Ալ-Մասքա» ՍՊԸ-ն ծանուցված չի եղել ընթացակարգի արդյունքների մասին, իսկ հանձնաժողովի արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում հայտերի բացումից մի քանի օր՝ 14.05.2020 թվականին, ուստի այս դեպքում ևս արհեստական խնդիրներ են ստեղծվել ընկերության համար հասկանալու և ճիշտ իրավիճակը գնահատելու համար: Ստացվում է այնպես, որ Նախարարությունը սպասել է այնքան ժամանակ, մինչ «Ալ-Մասքա» ՍՊԸ-ն չներկայացնի բնօրինակը, նոր հետո մերժեն ընկերությանը և արձանագրությունը հրապարակեն կայքում: Այս ամենից ելնելով, պետք է կիրառվեր Կարգի 41 կետը և տար շտկելու հնարավորություն ընկերությանը:»:*

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և ստորպի նախարարության կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգման և մասնակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. 11.05.2020թ. ժամը 11:00 կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու մասին կայացված որոշումը,

2. «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

**3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 01.06.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/8016-2020 գրությամբ դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից 01.06.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 03.06.2020թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ի պատասխան Ձեր 2020թ հունիսի 1-ի թիվ /ԲՔԱ-Լ0/2/8016-2020 գրության կից ներկայացնում եմ <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի 01.06.2020թ ներկայացրած բողոքի վերաբերյալ փաստաթղթերը, մասնավորապես վերջինիս հայտը, հայտի ապահովման բնօրինակի ներկայացման ուղեկցող գրությունը, դրա նախարարություն մուտքագրումը հավաստող փաստաթուղթը, գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկված մասնակցի գրությունը, գնման գործընթացի հրավերը, գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը:*

*Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2020 թվականի մայիսի 11-ին գնանշման հարցման ընթացակարգով թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 ծածկագրով կազմակերպված ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման և մասնակի բարեկարգման աշխատանքների գնման գործընթացին հայտ է ներկայացրել <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ն: ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե/ մասով սահմանված ժամկետում, տվյալ դեպքում մինչև 12.05.20թ ժամը 17:00-ը, <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվեր հայտի ապահովման բնօրինակը՝ բանկային երաշխիքի ձևով, սակայն այն չի ներկայացվել և վերջինիս հայտը 13.05.20թ գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է: Նշեմ նաև, որ <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ն 13.05.20թ ժամը 08:57-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է գրություն, տեղեկացնելով, որ հայտի ապահովման բնօրինակը կներկայացվի 13.05.20թ ժամը 10:00-ին, սակայն 13.05.20թ նախարարություն ներկայացրած հայտի ապահովման բնօրինակի ուղեկցող գրության ամիս/ամսաթիվը եղել է 12.05.20թ և այլ բովանդակությամբ:*

*Ինչ վերաբերում է մասնակցի ներկայացված դիմում-բողոքում նշված պնդմանը, որ հայտի ապահովման բնօրինակը ժամկետում չներկայացնելու պարագայում իրեն պետք է տրվեր անհամապատասխանության շտկման հնարավորություն, ապա այն չի համարվում հայտում արձանագրված անհամապատասխանություն և մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-*

*ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետով և մերժել մասնակցի հայտը:»:*

**4. <u>ԳԲՔԱ-LO-2020/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգման և մասնակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 29.04.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 11.05.2020թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ալ-Մասքա» ՍՊԸ-ն:

«Ալ-Մասքա» ՍՊԸ-ն «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 08.05.2020թ.-ին տրամադրված թիվ E20-000428 բանկային երաշխիքի (այսուհետ նաև՝ Երաշխիք) բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.05.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- հավելված 1-ի՝ դիմում-հայտարարության մեջ գործունեության հասցեն լրացված է եղել թերի, ինչպես նաև ծածկագրերից մեկը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին,
- լրացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանել հրավերով սահմանված ձևաչափին:

Նույն արձանագրության 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից շտկվել են անձանագրված անհամապատասխանությունները:

Արձանագրության 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ «Ալ-Մասքա» ՍՊԸ-ն չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը՝ բանկային երաշխիքի ձևով: Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել:

13.05.2020թ.-ին «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի տնօրենը գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ արտակարգ դրության հետ կապված (միջմարզային տրանսպորտային կապի բացակայության պատճառով), բանկային երաշխիքի բնօրինակը կներկայացվի մինչև 13.05.2020թ.-ի ժամը 10:00-ն:

«Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 08.05.2020թ.-ին տրամադրված թիվ E20-000428 բանկային երաշխիքի բնօրինակը Պատվիրատուին է ներկայացվել 13.05.2020թ.-ին:

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից 01.06.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտա-վորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ

կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգման և մասնակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 29.04.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 11.05.2020թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ալ-Մասքա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 08.05.2020թ.-ին տրամադրված թիվ E20-000428 բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, սակայն Մասնակցի կողմից չի ներկայացվել հայտի ապահովման բնօրինակը՝ բանկային երաշխիքի ձևով: Ինչի արդյունքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային

առաջարկի, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից, քանի որ Երաշխիքի բնօրինակ տարբերակը Կարգով սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր վերջինիս՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, որպիսի պայմաններում (արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու պարագայում) միայն կարող էր առաջանալ Կարգի 42-րդ կետով սահմանված դրույթների կիրառման անխուսափելիությունը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով նշված այն հանգամանքին, որ բանկային երաշխիքի փաստաթղթային տարբերակը չներկայացնելը կապված է եղել Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված միջմարզային տրանսպորտային կապի բացակայության պատճառով, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման

պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Ընկերության կողմից 12.05.2020թ.-ին բանկային երաշխիքի բնօրինակ տարբերակը գնահատող հանձնաժողովին հանձնելն եղել է անհնարին՝ պայմանավորված ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի մայիսի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ 13.05.2020թ.-ին «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի տնօրենը գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ արտակարգ դրության հետ կապված (միջմարզային տրանսպորտային կապի բացակայության պատճառով), բանկային երաշխիքի բնօրինակը կներկայացվի մինչև 13.05.2020թ.-ի ժամը 10:00-ն, որը վերջինիս կողմից կատարվել է, այն է՝ Երաշխիքի բնօրինակը Պատվիրատուին է ներկայացվել 13.05.2020թ.-ին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է, որպիսի պայմաններում խախտվում են Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից 01.06.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/71 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. 11.05.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**